ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ **Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը առարկաների դասավանդման ընթացքում**

Կազմեց՝ Գայանե Գրիգորյան Գրիշայի
(անուն, ազգանուն, հայրանուն)

<<Սյունիքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳԼՈՒԽ 1.

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ----------7

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ----------11

Դասի պլան. <<Սուտլիկ որսկանը>> հեքիաթը ----------17

Եզրակացություն ----------21

Գրականության ցանկ ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից դպրոցում այս կամ այն ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում սովորողների գիտելիքների և համապատասխան կարողությունների ձևավորման պահանջների մեջ առանցքային տեղ ունեն արժեքներն ու արժեքային համակարգի ձևավորումը, որի կարևորությունը չի կարելի թերագնահատել: Այս իրողությունը հիմնականում բխում է կրթության արդիականացման հայեցակարգի ներկայիս պահանջներից:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արդի գրական կրթության հիմնական խնդիրը երեխայի ինքնազարգացման ապահովումն է, երեխաների կողմից հոգևոր արժեքների յուրացումը, նրանց գեղարվեստական- գեղագիտական ճաշակի և ստեղծագործական ներուժի, խոսքի

զարգացումը: Այս կամ այն ուսումնական առարկայի ուսուցման և, առհասարակ, ուսումնառության առանցքում են դրվում որոշակի կարողությունների և հմտությունների, ինչպես նաև սովորողի վերաբերմունքի, արժեքային համակարգի ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Հետազոտության նպատակը

Ներկայացվող հետազոտական աշխատանքը նպատակաուղղված է առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցի ուսումնասիրությանը՝ առարկայի դասավանդման գործընթացի արդիականացման հնարավորությունների բացահայտման համատեքստում:

Հետազոտության գիտական վարկածը

Կարծում ենք՝ առարկայի դասավանդման գործընթացի արդիականացմամբ հնարավոր կլինի ուղի հարթել ուսումնական առարկաների դասավանդման, մասնավորապես՝ ուսումնական նյութերի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար և այն դարձնել նպատակային, լուծել ուսումնական կոնկրետ խնդիրներ, այդ թվում՝ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման խնդիրը՝ համարժեք մեթոդների ընտրությամբ և նպատակային գործադրմամբ:

Հետազոտության խնդիրները

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տեսա-մեթոդական գրականություն:

2. Պարզել «արժեքային համակարգ» հասկացությունը և դրա բովանդակությունը առարկայի դասավանդման համատեքստում:

3. Վերհանել մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը, ուղիներն ու մեթոդները:

Գրականության ակնարկ

Համաշխարհային կրթական զարգացումներում նկատվում են հանրակրթության բովանդակության ձևավորման և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նոր մոտեցումներ, որոնք որդեգրվում, ներմուծվում են նաև ազգային ուսուցման համակարգ:

Հայաստանում կրթության արդիականացման գործընթացը մեկ տասնամյակի պատմություն ունի: Այս ընթացքում լուրջ փոփոխություններ են կատարվել հանրակրթական համակարգի կառուցվածքում, մշակվել է կրթության մասին օրենքը, ստեղծվել ու շարունակվում են ստեղծվել նոր կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր:

Կրթության նկատմամբ ժամանակակից պահանջների իրականացման և նրա սոցիալական դերի բարձրացման համար անհրաժեշտ է կրթական համակարգի արդիականացում, ինչպես նաև կրթության նկատմամբ պետության, հասարակության և անհատի ունեցած վերաբերմունքի փոփոխություն: Արժեքային համակարգի ձևավորումը դիտարկելով որպես ուսուցման գործընթացի անբաժանալի մասնիկ անդրադառնանք այն մանկավարժ գիտնականներին , ովքեր գտնում են , որ առարկայի դասավանդմանը զուգահեռ ձևավորվում է արժեքային համակարգ: Այս բնագավառում կարևոր նշանակություն ունի Վ . Վ. Կրաևսկու հետազոտությունները: Անդրադառնալով արժեքային համակարգի ձևավորմանն ու կրթության բովանդակությանը նա սահմանում էր հետևյալ սկզբունքները:

Առաջինը հասարակության պահանջներին համապատասխանության սկզբունքն է, որը խնդիր է դնում ուսուցման գործընթացում ներդնել ու կիրառել ուսուցման՝ դաստիարակող և զարգացնող ֆունկցիաների անհրաժեշտությունը:

Երկրորդ սկզբունքը բովանդակային և գործընթացայնության հաշվառման ֆունկցիան է: Սա նշանակում է՝ ուսումնական առարկայի կամ նյութի նախագծման ժամանակ հաշվի առնել ուսուցման մեթոդների, օրինաչափությունների, սկզբունքների բոլոր հնարավորությունները: Ուսուցման ծրագրերում և դասագրքերում բովանդակության հետ միասին հաշվի առնել նրա հաղորդման և յուրացման եղանակների ընձեռած հնարավորությունները:

Երրորդ՝ կառուցվածքային միասնության սկզբունք նրա ձևավորման տարբեր մակարդակներում։ Այսինքն տեսական պատկերացում ունենալ ուսումնական առարկայի , նյութերի, մանկավարժական գործունեության, աշակերտի անձի մասին։ Այս սկզբունքը յուրաքանչյուր ուսումնական առարկայի ներկայացուցչից պահանջում է միասնական մոտեցում ունենալ կրթության բովանդակության կառուցման նկատմամբ։

Հետազոտության մեթոդները

Օգտագործվել են.

- մանկավարժական-հետազոտական
- տեսական և փորձարարական
- գրականություն
- գործնական
- խաղային տեխնոլոգիաներ
- ցուցադրական – զննական,
- համագործակցային,
- նախագծային մեթոդներ։

Հետազոտության օբյեկտը կրտսեր դպրոցում արժեհամակարգի ձևավորումն է։

Հետազոտության կառուցվածքը

Կազմված է ներածությունից, 2 գլխից, դասի պլանից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից։ Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային բովանդակության 15 էջ։

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ինչպես ձեռք բերված գիտելիքի և տեղեկատվության, այնպես էլ սեփական կենսափորձի հիման վրա: Արժեքային համակարգը կազմող համախմբերից յուրաքանչյուրի ձևավորման խնդիրները լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Այս հարցում անգնահատելի է դպրոցի դերը, որտեղ ուսումնական բոլոր առարկաների դասավանդման ընթացքում կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման տարբեր խնդիրների լուծումը, այդ ընթացքում սովորողներին փոխանցվող գիտելիքները, տեղեկատվությունը դառնում են անցյալի փորձի յուրացման, ազգային գիտակցության ձևավորման, հայրենասիրության և արժեքների ու արժեքային տարբեր որակների ու կողմնորոշումների արմատավորման հիմքը:

Արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը մշտապես եղել են մանկավարժական գիտության ամենատարբեր ուսումնասիրությունների կիզակետում: Պատահական չէ, որ ներկայումս մանկավարժության մեջ ձևավորվել են արժեքային համակարգի տարբեր ըմբռնումներ: Այդուհանդերձ՝ ընդունված է «արժեհամակարգ» հասկացության այն ընկալումը, որի համաձայն՝ «արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար» [1]:

Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը հիմնավորվում է մի կողմից հասարակության արմատական փոփոխությունների, մյուս կողմից՝ դրանից բխող՝ կրթական համակարգի վերակառուցման, արդի կրթական պահանջներին այն

[1] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ապրակ, https://vsu.am>grqer>aprak

համապատասխանեցնելու հանգամանքով: Արժեքային համակարգի ձևավորման կարևորությունը փաստվում է նաև այն իրողությամբ, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևորվում է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը[2]:

Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման ու ապահովման համար ՀՀ հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Կրթակարգով ամրագրվեց ապագա շրջանավարտի կատարելատիպը, որն առավելապես արժեքային համակարգի չափանիշներ էր պարունակում[3]: Ըստ էության, դրվեց կրթական լավ համակարգ ունենալու պահանջ, որը ենթադրում էր ոչ միայն գիտելիքի փոխանցում, կարողություն-հմտության ձևավորում, այլև սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրների կարգավորում:

Սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին հիմնահարցերն էին.

✓ լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

✓ դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ[4]:

Այսօր՝ հասարակության սոցիալ-տնտեսական արագ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրել են սոցիալական և անհատական արժեքների

---

[2] Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը 19-րդ դարում» գիտակրթական հանդես, հ. 1, Երևան, 2014

[3] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիրբնույթը, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ապրակ, https://vsu.am>grqer>aprak

[4] Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004

համակարգի որակական փոփոխությունների, որոնց համընթաց քայլող և դրանից բխող ուսումնա-դաստիարակչական խնդիրներն արդյունավետ լուծող կրթական համակարգ ունենալու արդի պահանջը հանգեցրել է հանրակրթության հարափոփոխման, իսկ արժեքների որակապես փոփոխման կամ նոր արժեքների առաջացման պայմաններում խնդիրն առավել սրվում է, որն էլ, կարելի է ասել, յուրաքանչյուր ուսուցչի առաջադրում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերի միջոցով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության բավականին բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա սովորողների համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ[5]:

Արագ տեղի ունեցող փոփոխություններն, ըստ էության, կապվում են գիտատեխնիկական արագընթաց զարգացմամբ, հասարակական կյանքի արագընթաց զարգացմամբ, համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացով, որն էլ կրթական համակարգին առաջադրում է նոր մարտահրավերներ՝ ժամանակի փոփոխությունների արդյունավետորեն և արագ արձագանքելու պահանջ: Վերջինս ենթադրում է կրթության բարեփոխում, կրթական առավել արդյունավետ մոդելների մշակում, արժեքային համակարգի բաղադրիչների հստակ սահմանում և դրանց ձևավորման քայլերի, սկզբունքների նախանշում:

Պետք է առանձնակի կարևորվի առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ համամարդկային ու ազգային արժեհամակարգի ձևավորման խնդիրը: Այսօր կրթությունը պետք է դառնա մեզ դարերով ավանդված ազգային, մշակութային, հոգևոր արժեքների փոխանցողն ու պահպանողը: Ազգային արժեքների ձևավորումն ու պահպանումն այսօր դպրոցի կարևորագույն նպատակներից է: Ներկայումս, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, գերակա ռազմավարության նշանակություն ունեցողհիմնախնդիր է դառնում ազգային արժեհամակարգի ձևավորումն ու զարգացումը:

[5] Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությանը և վերջինս առօրյա կյանքում վերամիաստավորելու նախնական փորձ ձեռք բերում: Մասնավորապես՝ մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:

Յուրաքանչյուր ուսուցչի խնդիրն է՝ առարկայի դասավանդման գործընթացում հասնել նրան, որ երեխան գիտակցի դրա կարևորությունը, օգտակարությունը, այն է՝ այդ գործընթացն ընկալի որպես ոչ միայն զուտ տվյալ դասանյութի, այլև այն ներկայացնող ազգերի ու ժողովուրդների արժեհամակարգի, մշակութային արժեքների ու կյանքի հիմնական առանձնահատկությունների իմացություն, և դրա հիման վրա՝ գնահատողական վերաբերմունք ձևավորի ինչպես վերջիններիս, այնպես էլ սեփական ժողովրդի ու երկրի մշակույթի, մտածելակերպի հանդեպ, կարողանա ճիշտ արժևորել ու վերագնահատել բարոյական, հոգևոր, համամարդկային ու ազգային արժեքները:

Մայրենիի ուսուցման ժամանակակից հայեցակարգը ներառում է ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև դրանց միջոցով ավանդույթների, սովորույթների, ապրելակերպի, հավատալիքների, գաղափարախոսության, աշխարհի մասին (աշխարհայացք) պատկերացման, արժեքային համակարգի և շատ ավելիի» յուրացում: Որպես կանոն, ծանոթանալով նոր գիտելիքների՝ երեխաները բացի դրանք ձեռք բերելուց, հաղորդակցվում են նաև ազգային մշակույթին և հոգևոր հարստությանը: Ստորև փորձել ենք քննարկել մայրենիի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հնարավորությունները, արդյունավետ ուղիներն ու մեթոդները:

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դաստիարակությունը անհատի ձևավորման նպատակասլաց, համակարգված գործընթացն է՝ նրա ակտիվ մասնակցությունը հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար։

Ըստ Ուշինսկու, դաստիարակության տարբեր կողմերի շարքում գլխավոր տեղը հատկացվում է բարոյական դաստիարկությանը, քանի որ բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ զարգացնում է մարդասիրություն, ուղղամտություն, աշխատասիրություն, ազնվություն, կարգապահություն և պատասխանատվության զգացում, որը զուգակցվում է համեստության հետ։ Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացում[6]։

Արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս նպատակահարմար ենք գտնուում նախ անդրադառնալ դաստիարակությանը և կարևորելով բարոյական, հայրենասիրական, աշխատանքային դաստիարակությունը կարող ենք տալ հստակ սահմանում՝ արդյոք ո՞րն է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործընթացի էությունը։

Հաշվի առնելով դաստիարակության առանձնահատկությունները, կարող ենք նշել, որ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ընթացքում դրսևորվում է դաստիարակությունն իր բոլոր առանձնահատկություններով։ Այսպիսի հետևություն մենք արել ենք դասապրոցեսի ընթացքում արժեքային համակարգի ձևավորման ժամանակ։

Կրտսեր տարիքում բարոյական զարգացման առանցք կամ հիմք կարող են հանդիսանալ այն նորմերը, որոնք համամարդկային արժեքներ են։ Կրտսեր տարիքում բարոյական զարգացման հիմքը երեխաների մեջ հումանիստական հարաբերությունների ու փոխհարաբերությունների ձևավորումն է։ Հետևապես տարրական դասարաններում դասվարի խնդիրն այդ պետք է լինի։ Հենց այդ

[6] К. Д. Ушинский , Педагогика, М. , 2019

տարիքում է , որ երեխան պետք է ըմբռնի, որ ինքը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից, մարդկանցից կտրված։ Որ մարդկանց հետ հաղորդակցումը, շփումը, փոխհարաբերությունները դեպի մարդասիրությունը տանող – անապարհներն են։ Ուրեմն՝ ամեն կերպ պետք է ձգտել դրանք դարձնել կրտսեր դպրոցականներիամենօրյա արարքների առանցքը՝ գերմանացի փիլիսոփա Ա. Շոպենհաուերը ասում էր. «Մենավոր մարդը թույլ է, ինչպես լքյալ Ռոբինզոնը...»։

Որո՞նք են ուսուցչի պարտականությունները.

- ✓ երեխային զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով, այդ նպատակով օգտագործել ուսումնական առարկաների ընձեռած բոլոր հնարավորությունները,
- ✓ հաճախակի կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր։
- ✓ դասապրոցեսի ընթացքում անդրադառնալ այս կամ այն թեմայի բարոյական կողմին, որը լավագույնս հնարավոր է իրականացնել «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների դասավանդման ընթացքում։

Այժմ անդրադառնանք աշխատանքային դաստիարակությանը։ Դպրոցում աշխատանքային դաստիարակությունը ներառում է՝

ա) ուսումնական աշխատանքը,

բ) գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը

գ) ուսումը

դ) տեխնոլոգիա և կերպարվեստ առարկաները։

Ուսումնական աշխատանքը այն հիմնական բաղադրատարրն է, որը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին նախապատրաստվել գործնական աշխատանքի և պատրաստակամ լինել աշխատելու ժողովրդի և հայրենիքի համար։ Ուսուցման ընթացքում սովորողները ձեռք են բերում հենակետային գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն նրանց գործնական աշխատանքի նախապատրաստելու համար։

Ուսման ընթացքում և նրա միջոցով դպրոցականները, ուսուցչի ղեկավարությամբ և ինքնուրույնաբար ուսումնասիրում են ուսումնական

առարկաները, ձեռնարկները, սկզբնաղբյուրները, անընդհատ համալրելու իրենց գիտելիքները, զարգացնում իրենց իմացական կարողությունները: Ուսմանն օգնում են ժամանակակից տեղեկատվության միջոցները:

Հարկ ենք համարում նշել, որ տեխնոլոգիա առարկայի հիմնական առաքելությունը սովորողների ժամանակակից տեղեկատվական համակարգում ինքնուրույն աշխատանքային կյանքի նախապատրաստելն է կիրթ, ստեղծագործ, նախաձեռնող և ակտիվ անձնավորություններ դաստիարակելը, ինչը համարվում է կարևոր արժեքներից մեկը: Աշխատանքը ոչ թե վկայություն է ընդունակությունների բացակայության մասին, այլ, ընդհակառակը, ընդունակությունների զարգացման հաստատուն երաշխիք է, այսպես են գտնում հոգեբանները[7]:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

Ինչպե՞ս ենք մենք սովորողների մեջ սերմանում հայրենասիրությունը և ձևավորում արժեքային համակարգը: Մենք գտնում ենք, որ սովորողների հայրենասիրական դաստիարակության համար կարևոր դեր են խաղում մեծ հայրենասերների, ֆիդայիների, Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, ապրած կյանքն ու գործունեությունները, Սարդարապատի հերոսների անմոռաց կերպարները, Ղարաբաղյան պատերազմում անմահացած հերոսների, աշխարհահռչակ զորավարներ Բաղրամյանի, Բաբաջանյանի, Իսակովի հավերժող օրինակները և , իհարկե, 44-օրյա պատերազմում անմահացած մեր հերոսներն իրենց սխրանքներով, որոնց շարքում են Ալբերտ Հովհաննիսյանը, Շահեն Գալստյանը, Ալեն Մարգարյանը, Էդվարդ Բաբայանը: Այսպիսի նվիրյակների մասին հարկավոր է պատմել սերունդներին, կազմակերպել միջոցառումներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ

[7]. Հ. Ղաջոյան, Երեխաները տարիքն ի վեր,Երևան,2002, էջ 56

զոհվածների ընտանիքների հետ, որովհետև ոչ հեռավոր անցյալում հայ ժողովրդի ծոցից ելան նոր դավիթներ և առյուծաձև մհերներ, որոնք իրենց հայրենասիրությամբ անջնջելի հետք և մեծ անուն թողեցին մեր պատմության էջերում:

Հայրենասիրության դաս գրադարանում /Զորավար Անդրանիկ /

Բացի վերը նշվածից, սովորողների մեջ արժեքային համակարգ և հայրենասիրական դաստիարակություն ձևավորում ենք գերբի, դրոշի, օրհներգի, զինանշանի, մեր ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրության միջոցով, գրողների, գիտնականների, արվեստագետների հետհանդիպման արդյունքում, որը մենք իրականացնում ենք պարբերաբար:

Գրաճանաչության տոն

Սովորողները ներկայացնում են Հայաստանի անցյալն ու ներկան, մեր մեսրոպյան այբուբենը և ոսկեղենիկ մայրենիով հնչեցնում բանաստեղծություններ և հայրենասիրական երգեր

Աշնանատոն

Մրգահանդեսն ու աշնանային անտառը նպաստում են սովորողների ստեղծագործական երևակայության զարգացմանը և խթանում գեղագիտական դաստիարակությունը

Վահանավանք վանական համալիր

Սովորողներին ծանոթացնել մեր երկրի պատմամշակութային արժեքներին

Մայրենիի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռբերումը:

Չնսեմացնելով մտավոր, գեղագիտական, ֆիզիկական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակության դերը, այնուամենայնիվ, փորձի արդյունքում գրանցել ենք հետևյալ պատկերը:



1. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
3. ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
4. ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
5. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
6. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՎԵՑՆՅԱԿԸ

Յուրաքանչյուր դասի ժամանակ որոշակի դաստիարակչական խնդիրներ եմ լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (խմբային, անհատական, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ եմ դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ կազմակերպած խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորեցին ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է

արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Դասի պլան. <<Սուտլիկ որսկանը>> հեքիաթը

Դասի թեման - <<Սուտլիկ որսկանը>> հեքիաթը

Դասի տիպը – Նոր նյութի մատուցման դաս

Դասի նպատակը և խնդիրները

- Կարդալու որակական հատկանիշների կատարելագործում՝ ապահովելով այն մակարդակը, երբ կարդալու տեխնիկան չի խոչնդոտում կարդացածի ընկալմանը:
- Արտահայտիչ ընթերցանության հմտության ձևավորում:
- Հեքիաթի՝ որպես գրական ժանրի գեղարվեստական առանձնահատկությունների թվարկում:
- Բանավոր խոսքի, կարծիքների և մտքերի արտահայտման հնարավորության ապահովում:
- Նկարի շուրջ հեքիաթ և պատմություն հորինելու կարողության զարգացում:
- Սովորողների բարոյական որակների ձևավորում:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Համառոտ դասախոսություն - <<Ամենասովորական հրաշքներ>> թեմայից ծանոթացանք շատ հետաքրքիր հերոսների, և համոզվեցինք, որ կյանքում շատ հրաշքներ կան: Ասեմ ձեզ, որ հրաշքն ու հրաշալիքը մարդկային վառ երևակայության արդյունք է: Այն ինչ մարդուն իրական կյանքում անհասանելի է, իրականություն է դառնում երևակայական աշխարհում: Հեքիաթն էլ այդ հրաշալիքներից է, որտեղ հերոսներն ու իրադարձությունները անիրական են, սակայն հետաքրքիր ու չափազանց զվարճալի:

Մտագրոհ – Ես սովորողներին առաջարկում եմ ասել հեքիաթ բառի շուրջ գլխում ծագած առաջին իսկ միտքը և առանց մեկնաբանության բոլոր գրվածները ամրացվում են գրատախտակին:



Սովորողներին ուղղում եմ հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ հայ մանկագիրներ գիտեք, որոնք երեխաների համար գրել են հեքիաթներ /Ղ. Աղայան, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան և այլն /
2. Հ. Թումանյանի ո՞ր հեքիաթն գիտեք / նրանք թվարկում են հեքիաթներ, որից հետո հարց եմ ուղղում դասարանին /

- Ո՞վ է կարդացել կամ լսել <<Սուտլիկ որսկանը>> հեքիաթը։
- Ինչի՞ մասին է այդ հեքիաթը։

Իմաստի ընկալում

Դիմում եմ սովորողներին

Սիրելի՛ երեխաներ, քանի որ այս հեքիաթը ծանոթ է ձեզ, ապա կփորձենք միասին վերհիշել հեքիաթի բովանդակությունը։ Ես ցուցադրում եմ մեծադիր նկար, որտեղ պատկերված է <<Սուտլիկ որսկանը>> հեքիաթից մի դրվագ, այնուհետև հանձնարարում եմ հորինել հեքիաթ տրված նկարի շուրջ։ Առաջին միտքը կազմում եմ ես, որից հետո սովորողները հերթով պատմում են նկարը՝ ավելացնելով մեկական նախադասություն։ Սովորողներից մեկը ընթերցում է հղումը և ես մեկնաբանում եմ, որից հետո կատարվում է աշխատանք դասագրքով, կիրառելով <<ուղղորդված ընթերցանության>> մեթոդը։

Դասը բաժանում եմ երեք մասի։ Յուրաքանչյուր մաս հանձնարարվում է ընթերցավարժ սովորողի, որպեսզի ընթերցի։

Առաջին մասը ընթերցելուց հետո տրվում է դադար և առաջադրվում է 2 հարց.

1. Որտե՞ղ գնաց հեքիաթի հերոսը և ու՞մ հետ / վերարտադրողական-ընկալման աստիճանի ստուգում /
2. Ինչպե՞ս կորսան որսորդները բադերին / գուշակում են պատմվածքի շարունակությունը։

Երկրորդ մասը ընթերցելուց հետո տրվում է նույն բնույթի հարցեր։

Երրորդ մասը ընթերցվում է նույն կարգով։

Ես հարցերով ամփոփում եմ նյութը։

- Ինչպիսի՞ հեքիաթ է <<Սուտլիկ որսկանը>> / զվարճալի, ուրախ, հետաքրքիր /
- Ի՞նչն է զվարճալի դարձնում այս հեքիաթը/ անիրական պատմությունները, սուտը/
- Ի՞նչ եք կարծում լա՞վ է, որ ստում են

Բառային աշխատանք

Սովորողները իմ հանձնարարությամբ բնագրից հանում են անծանոթ բառերը, որոնք հիմնականում բարբառային բառեր են և գործածվում են խոսակցական լեզվում։ Ես աշակերտներին բացատրում եմ, որ ժողովրդական բանահյուսության մեջ այն օգտագործվում է խոսքն ավելի արտահայտիչ և գունեղ դարձնելու նպատակով։

Լեզվական աշխատանք

Հարցերով ամփոփում ու ամրապնդում եմ սովորողների ունեցած գիտելիքները նախադասություն թեմայից՝ կատարելով հարցադրումներ։ Խմբերին բաժանելով բառեր, հանձնարարում եմ խմբային աշխատանք։ Խմբերը նախադասության մեջ վերականգնում են բառերի հերթականությունը։ Խմբային աշխատանքը ավարտելուց հետո ստուգում եմ աշխատանքները և կատարում գնահատում։ Որից հետո աշակերտներին հանձնարարում եմ տետրում գրել առաջադրանք 1-ը / նկարի շուրջ նախադասություններ կազմելուց հետո սովորողներից մի քանիսը համառոտում են դրանք։

Կշռադատման փուլ

Սովորողներին տրվում է նկարներ, որպեսզի վերականգնեն խաթարված հերթականությունը: Աշխատանքը ավարտելուց հետո նրանց դիմում եմ հետևյալ հարցով.

• Արդյոք, կարելի՞ է ստել / սովորողները հայտնում են իրենց կարծիքները/

Լսում եմ սովորողների կարծիքները, ամփոփում և առանձնացնում եմ կարևոր միտքը. սուտը վատ սովորություն է և որ այն բացի զվարճալի լինելուց կարող է դառնալ վտանգավոր: Կան ստեր, որոնք մարդկանց ցավ են պատճառում, ստեղծում անվստահության մթնոլորտ և վերջապես դառնում բնավորության գիծ:

Եկեք երբեք սուտ չխոսեք. <<Ստի ոտքը կարճ է >>

Տնային հանձնարարություն

Դասանյութը սովորել վարժ կարդալ, պատասխանել հարցերին, առաջադրանք 2, հորինել սուտ և գրել հրաշք տետրում:

Կատարել գնահատում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Արժեքների հանդեպ ճիշտ վերաբերմքունքը ու դրա կարևորության գիտակցումը արմատավորվում են տարրական դպրոցում, ուստի հարկավոր է մայրենիի դասաժամերը հնարավորինս ճիշտ և արդյունավետ կազմակերպել տարրական դասարաններում՝ դրանք նպատակաուղղելով ինչպես երեխաների գիտելիքների, կարողությունների, ինքնուրույնության, ստեղծագործական մտածողության, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորման խնդրի լուծմանը:
2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը անձի համակողման զարգացման կարևորագույն առանցքն է և նրա համալիր դաստիարակության վերջնարդյունքը:
3. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում բոլոր առարկաների դասավանդման ընթացքում, առավելապես՝ Մայրենիի:
4. Արժեքային համակարգի ձևավորման գործում բացառիկ է բարոյականդաստիարակության դերը:
5. Սովորողների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռբերումը:

6. Արժեքային համակարգի ձևավորման հարցում կարևոր ենք համարում առարկայի դասավանդման մեթոդների գործադրման նպատակը և ակնկալվող արդյունքը:
7. Առարկայի դասավանդման ընթացքում մեծ տեղ է հատկացվում ուսումնական նյութերն արդիականացնելու անհրաժեշտությանը:
8. Մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

Գրականության ցանկ

1. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը 19-րդ դարում» գիտակրթական հանդես, հ. 1, Երևան, 2014
2. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004
3. Ղաջոյան, Երեխաները տարիքն ի վեր, Երևան,2002, էջ 56
4. Պապիկյան Կ., Սաֆարյան Լ., Սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացի համալիր բնույթը
5. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak
6. К. Д. Ушинский , Педагогика, М. , 2019
7. https://avedisianschool.am